


որպէս զի մեր եղբայրակցին եւ մեր հողին համար ազօթեն մշանջնապէս:» Ուրիշ տեղ մըն ալ (S 3801, թղ. 165) արձանագրուած կը գտնենք, որ 1411 յունիւ. 26-ին Կարողոս թագաւորը Լեւոնի կառակապատըններուն գումար մը վճարած է, Tournefiz-ի աւաստակաւիան կալուածը գնելու համար, անշուշտ իրը եկամուտ Կեղեսոյնեանց կրօնաւորներու:

Գալով պարխուհներու, — Լեւոնի կառակէն բացարձակ կերպով կը տեսնուի որ իր մտերմական յարաբերութիւններէն յտալ է կամ է, իր կառակին բառերով, «խորթ եւ ազօրէն զաւակ» մը՝ Գուխոն, որ Ambleux-ի աշտարակին հարիւրապետ կարգուած է, եւ մինչեւ վերջը Կարողոս թագաւորին պաշտպանութիւնը վայելած: Իսկ կառակին գրուելէն ետք՝ Լեւոն ուրիշ զաւակի մը հետքերն ալ ունեցած է, որ վերջապէս աշխարհ եկած է եւ Ֆիլիպ անունով մկրտուած՝ կա՛մ իր մահէն շատ քիչ առաջ եւ կամ ետքը, ապա թէ ոչ՝ Լեւոն իր կառակին մէջ լուծեամբ չէր անցներ եւ անշուշտ իր հարստութիւնէն անո՛ր ալ բաժին մը կը հասէր: Ֆիլիպ Պարիսի Մայր-Եկեղեցիին մէջ կը պաշտօնավարէր իրբեւ աւագերէց Բրիլ:



ԻԴ

Լեւոնի սուրն ու քաղը

 մ քննութեանս արդիւնքը ցոյց տուաւ, որ այսօր « Լեւոնի սուրն » անունով շատ մը սրեր կը գտնուին թէ՛ մասնաւոր անհատներու քով եւ թէ՛ եւրոպական այլ եւ այլ թանգարաններու մէջ: Այսպէս՝ Ուրմիայի ընակիչներէն պ. Յովսէփ Մինասեան իր 11 դեկ. 1902 թուակիր նամակով զրկած է ինձ Լեւոնի — աւելորդ է ըսել՝ կեղծ — մէկ սրին պատկերը, հետեւեալ ծանօթութիւնը աւելով. « Սուրի թռչանակար ոսկի բանուածքներից մէկը կարգացուած է Լեւոն, միւսը՝ Լուսինեան (1): » Իսկ ուրիշ մը՝ պահուած է Աթէնքի Պատմական եւ Ցեղաբանական Թանգարանին մէջ: « Գահիրէցի » ստորագրութեամբ անցորդ

(1) Ցե՛ս այս մասին նաեւ պ. Մ. Փորթուգալեանի « Աւրեկիս »-ն, ԺԳ տարի, քիւ 1: